

341.3

9-31

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՊԺՈՂԿՈՄՍ  
Սոցիալական գասիարակութան գլխավոր  
վ ա Ր Յ Ո Ւ Բ Ն Ը Ն

ՄԱՄԻԿՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ԿԵՆԴԱՆԻ ԱՇԽԱՏԱՆԲ

Մ Ա Ս Ա.

Գրավոր աշխատանքի գիրք ուսուցչի համար

Պ Ե Տ Ա Կ Թ Ն Զ Բ Տ Ա Բ Թ Կ Զ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Յ Ե Ր Ե Վ ա ճ — 1 9 2 7

1 MAR 2010

14 MAR 2013

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԸՏ  
Սոցիալական գասխարակուրյան գլխավոր  
վարչություն

ՄԱՍԻԿՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

374,3

9-31

Կ

1004  
8119  
1618

ԿԵՆԴԱՆԻ ԱՇԽԱՏԱՆԲ

Մ Ա Ս Ա

Գրավոր աշխատանքի գիրք ուսուցչի համար



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ ա Ն — 1 9 2 7

1 MAR 2018

47.989  
14 MAR 2018

Գրանցված 305բ.      հ. 594      Տիրամ 2000  
Պետհրատի 2-դ տպարան Յերեվանում—733

I

**ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՄԱՆ  
Ա. ՏԱՐՈՒՄ**

(Քլիբեհարացից հետո).

«Կենդանի աշխատանք» մեթոդական ձեռնարկի սույն Ա. մասի գրավոր աշխատանքների նյութը կազմում է ՚<sup>0</sup> գլուխը Ա. խմբի չերկրորդ և չերրորդ յեռամսյակների կոմպլեքսային թեմաների բովանդակությունը: Ուսուցչի համար այս ծառայում է վորպես «գրավորների աշխատանքի գիրք», վորի 130 կարճ, հետաքրքրական և բազմազան աշխատանքներն առատ նյութ կմատակարարեն ըստ դասի ծրագրի կոմպլեքսների մշակման՝ մի տեսակ տեղեկատու և ուղեցույց դառնալով ուսուցչի ամենօրյա գրավոր աշխատանքների կազմակերպման համար: Բնական է, վոր այս գրքի աշխատանքները նույնությամբ չպետք է անցնել, այլ նաչաձ խմբի պատրաստության, ուսման տարվա տեղություն՝ պետք է հարմարացնել տվյալ խմբին՝ կրճատելով և համառոտելով աշխատանքները, նորերն ավելացնելով, հաջորդականութունը փոխելով (որինակ՝ աշխ. 3 և 4 չպիտի գրել տալ անպայման հունվարի 3-ին և 4-ին, այլ ձյուն

յեկած ուրը, հունվար ամսի մեջ) և այլն: Յեթե մենք ընդունում ենք, վոր գրավոր աշխատանքների ժամանակ առավել ևս հանդես պիտի գա աշակերտների ակտիվութունն ու ինքնագործունեութունը, ապա չերբեք այս պատրաստի աշխատանքներն, առանց կապելու դասի ընթացիկ աշխատանքին, չպիտի տալ այս աշխատանքները լոկ որինակելի նմուշներ են, վորոնք նպաստելու լին ուսուցչին՝ սրանց նմանութեամբ աշակերտներին նորերը կազմել տալու:

Ուղղագրութունը գրաֆիկ արվեստ և, մի տեսակ ունակութուն, վոր կարելի չե ձեռք բերել կանոնավոր և սխտեմատիկ կերպով աչքը և մանավանդ ձեռքն ուղիղ գրելուն վարժեցնելով: Յեթե Ա. խմբում աշակերտի աչքն ու ձեռքը վարժվում են սխալ գրելու մեջ, ապա բարձր խմբերում կրկնակի աշխատանք պիտի թափել սխալը վերացնելու և ճիշտը սովորեցնելու համար: Վերոհիշյալ պատճառով Ա. խմբում ուղղագրութուն սովորեցնելու մեթոդի հիմքը պիտի ընդունել սխալները կանխելու սկզբունքը, այսինքն՝ աչնպիսի գրավոր աշխատանքներ պիտի կազմակերպել և աչնպիսի միջոցներ պիտի գործադրել, վոր աշակերտները վոչ մի անգամ սխալ չգրեն և վոչ մի անգամ սխալ չտեսնեն: Այդ նպատակով, գրավորի ամբողջ նյութը կամ նրա դժվար բառերը նախապես պիտի գրել գրատախտակին, չերեխաներին թույլ պիտի տալ հարցնելու ընկերներին և ուսուցչին, ոգտվելու պատին փակցրած ուղղագրական բառացուցակներից և այլն: Այս գրքում գրավոր աշխատանքի մեջ գործածվող բառերի ցուցակը միշտ գրվում և աշխատանքից հետո «տեղեկանք» անվան տակ:

Վոչ միայն Ա. խմբից, այլ և բոլոր խմբերից լսողական և ստուգողական թելադրութունը, վորպես սխալները կանխելու հիմնական սկզբունքին հակասող ձե, բոլորովին պիտի վտարել, չնայած վոր թելադրութեան այդ հիմնովին թաղված, միանգամայն անպետք ու վտանգավոր ձեը վերջերս հարութուն և առել և, կարծեք, փորձեր և անում գրավելու հին դիրքերը: Ստուգողական թելադրութունը չի կարելի ընդունել նաև ստուգման նպատակով (այս մասին Շապըշնիկովը մանրամասն խոսում և իր „Как учитывать орфографическую грамотность в школе“ բրոշյուրում, վոր և հանձնարարում ենք անպայման կարգալ): Թյուրիմացութուններից խուսափելու համար, այստեղ պիտի շեշտել, վոր մենք չենք ժխտում թելադրութեան բոլոր ձեերը, Ա. և Բ. խմբերում միանգամայն ընդունելի լինք համարում, այսպես կոչված՝ **գիտողական և սեղծագործական թելադրութունը**, իսկ Գ. խմբից սկսած՝ նաև **ազատ թելադրութունը** (սրա մասին կխոսվի «կենդանի աշխատանքի» Գ. մասում), վորովհետև սրանց մեջ նպատակ և զրվում վոչ մի սխալ չանել, ամեն կերպ կանխել սխալը: Թելադրելիք նյութն ամբողջովին կամ վորեւե կանոնի վերաբերյալ բառերը և կամ դժվար գրվող բառերը նախապես գրվում են գրատախտակին և ապա միայն դրանցով, վորով գիտողական թելադրութունը դառնում և մի տեսակ **խոսքի արտագրութուն** (խոսք-խոսք և արտագրվում և վոչ թե բառ-բառ), ստեղծագործական թելադրութունը՝ **ուղղագրական արտագրութուն**, իսկ ազատ թելադրութունը՝ **ասածվածների կամ հասվածիկների փոխադրութուն** այս

ձևի թերագրութունները մեջ (շատ լավ կլինէր թերագրութուն չկոչել, բայց պահում ենք անունները, վորովհետև այդ անուններով են հայտնի ուսական գրականութան մեջ. մեր մեջ ևս արդեն ժողովրդականացել են այդ անունները) չկազմու ընդունվում են վոչ թե լսողական տպավորութունները, այսինքն՝ վոչ թե մեկն ասում է, իսկ մյուսը նույնութամբ տառ-տառ կամ բառ-բառ մեքենայորին գրի յե առնում, ալլ նախ՝ տեսնում է և հետո գիտակցարար գրում և՛ տեսողական և մտքի հիշողութան վրա հիմնվելով:

Այսպիսով, Ա. խմբում պիտի կիրառել գիտակցական արտագրութան զանազան ձևեր և այն ել բացառապես արտախտակից: Գիտակցորեն արտագրել նշանակում է՝ իրեն հաշիվ տալ, թե ամեն բառ, ամեն խոսք ինչ նշանակութուն ունի, կենդանի պատկերացնել իր գրելիքը («Վնչ մի գրավոր բառ՝ առանց կենդանի մտքի»), վորով աշակերտը գաղարում է մեքենայորեն ընդորինակելուց, վոր միանգամայն բըթացնում է աշակերտին: Կենդանի պատկերացման շատ է նպաստում և աշխատանքներին իմաստ է տալիս մանկական ինքնուրույն և ստեղծագործական ազատ նկարը: Մասնավորապես Ա. խմբում շատ ժամանակ պիտի հատկացնել նկարելուն, վորը պիտի լինի մատիտով արված, շատ պարզ, հասարակ, միայն ուրվագիծ, առանց ուսուցչի ուղղումների:

Յեթե գրավոր աշխատանքը վոչ թե աշակերտների կողմից մշակված վորևե կոլլեկտիվ պատմվածք է, այլ ընթացիկ դասի հետ կապված պատրաստի նյութ, որինակ՝ վոտանավոր, հանելուկ, առած, շուտասելուկ

և այլն, ապա՝ նախքան գրելն ուսուցիչը պիտի բարձրաձայն, դանդաղ և զեղեցիկ առոգանությամբ կարգա, բացատրի անհասկանալի բառերը, վերլուծի բառ մտքի և ապա միայն խոշոր, պարզ, զեղեցիկ և, առանց ընդհատումների, մազային գծիկներով միացած՝ այնպես գրի բառերը, վոր յերեխաները տեսնեն ուսուցչի ձեռքի շարժումները, գրելու պրոցեսը, Գրելուց հետո՝ աշակերտներին պիտի վարժեցնել գրածը սահուն և արագ կարգալու, վորովհետև ազատ ընթերցանութունը շատ է նպաստում անսխալ արտագրելուն. ապա՝ պետք է հաշիվ լսելի ձայնով՝ փոփոսկով վանկ-վանկ արտասանել տալ և տեսողական ու հիշողութան թարմ տպավորութան տակ՝ տեսարակում գրել տալ ամբողջ բառը միանգամից, առանց ընդհատումների, առանց կտրելու ձեռքի շարժումը: Յեթե բառը շատ չերկար է, կամ բարդ բառ է՝ կարելի չէ արտագրել տալ վանկ-վանկ, կամ ավելի ճիշտ՝ բարդ կամ անանցական բառի բազազրիչ մասերով: Ուսուցիչն աշակերտների գրելու ժամանակ շրջում է դասարանում և տեղն ու տեղն ուղղում, կանխում է նկատած ընդհանուր սխալները: Աշակերտները բառն արտագրելուց հետո ստուգում են իրենց գրածը, համեմատում են գրատախտակին գրած բառի ճիշտ գրապատկերի հետ: Այստեղից հետևում է, վոր ուղղագրութուն սովորեցնելու ամենալավ ձևն «բառ կայի արտագրութունն» է, այսինքն՝ «վերլուծական արտագրութունը՝ կապված վերլուծական արտասանության հետ»:

Յերեխաները մի շարք գիտողութուններից հետո ինքնաբերաբար գալիս են այն յեղրակացության, վոր մենք գրում ենք այնպես, ինչպես տեսնում ենք, ինչպես ընդունված է գրել և վոչ թե այնպես, ինչպես

խոսում ենք, ուստի և չի կարելի գրութիւնը հիմնն արտասանութեան վրա:

Արտագրութիւնը հետաքրքրական և իմաստալից դարձնելու համար պետք է աշխատանքների մեջ բազմազանութիւն մտցնել, հեշտ և մատչելի նյութեր ընտրել և տետրակում 4—5 տողից սլել գրել շտաբ, վորովհետև հոգնելու դեպքում ուշագրութիւնը ցրվում է և շատ սխալներ են արվում:

Այս գրքում շատ մեծ տեղ է տրված գասարանական կոլլեկտիվ աշխատանքներին. յենթաթեմայի մըշակման հետ կապված կենդանի գրուցից հետո՝ որագիր, արձանագրութիւն, նամակ գրելու համար ուսուցչի ոժանդակ հարցերով աշակերտները կարճ-կարճ խոսքեր են կազմում, ընդհանուր ուժերով լրացնում, ամբողջացնում են այդ կոլլեկտիվ պատմվածքը, 1—2 հոգու ամփոփ պատմել սուրբ հետո և ապա՝ ուսուցչի ոգնութեամբ խոսքերն սլելի կարճ, սեղմ և կանոնավոր ձևակերպելուց հետո, նյութը գրվում և գրատախտակին, ուղղագրական վերլուծութեան և յենթաթարկվում և գրի առնվում տետրակներում, ինչպես վերևում մանրամասն նկարագրվեց: Մի քանի աշխատանք էլ հատկացրված են ստեղծագործական թելագրութեան. ուսուցիչը գրատախտակին գրում և վորոշ կանոնի վերաբերյալ մի քանի բառ, աշակերտներն այդ բառերով ինքնուրույն խոսքեր են կազմում վորև թեմայի վերաբերյալ և ապա իրենք իրենց թելագրում («Ինքնաթելագրութիւն»), այնպես, վոր ստացվի մի իմաստալի ամբողջական կոլլեկտիվ շարագրութիւն, վորի մեջ, յեթև վոր գրատախտա-

տակին գրված բոլոր բառերը, գոնև, նրանց մեծ մասը գործածվեն:

Առանձնապես լուրջ ուշագրութիւն պիտի դարձնել աշակերտների գրութեան արտաքինի վրա. աշակերտները պիտի գրեն մաքուր, ախուրատ և հնարավոր չափով գեղեցիկ, վորովհետև լավ գիրը, բացի սովորական նպատակներից, մեծ նշանակութիւն ունի նաև ուղիղ գրելու, քիչ սխալներ անելու համար:

Վերջը՝ վորտանավորները տող-տող, իսկ արձակ հատվածիկները՝ խոսք-խոսք արտագրել սովորեցնելու համար՝ պետք է հաճախ դիտողական թելագրութիւն անել սալ. գրատախտակին գրելուց և հարկավոր վերծուլութիւններից հետո թղթով կամ շորով պիտի ծածկել վորտանավորի մի տողը կամ արձակ հատվածիկի մի խոսքը և աշակերտներին գրել սալ, առանց նայելու գրատախտակի վրա գրածին. գրելուց հետո իջեցնել շորը և համեմատել սալ իրենց գրածը գրատախտակին գրածի հետ:

Սուչն մեթոդական ձեռնարկի Ա. և Բ. մասերը կազմելիս՝ ձեռքի տակ եմ ունեցել Շապղշնիկովի, Նիկոլսկու, Զիստոյակովի, Պոլյակովի, Ուշակովի, Շըչեպետովայի, Մմիրնովայի, Լոպիրևայի, Սոլովևայի, Յիտնգլինսկայի, Ֆրիլլանդի, Շալխի, Պեշկովսկու, Աբակուսովի, Կլուեկայի, Եմենովի, Լանգովի, Մոշկովայի, Կրիլցովի, Նիկալսի, Կալուսի, Վասիլևայի, Կարպինսկայայի, Պչելկովի, Աֆանասովի և ուրիշների աշխատութիւնները, ուսաց լեզվի X և XI խմբերի գասագրքերը, մանկավարժական պարբերականներ, հայոց լեզվի գասագրքեր, ամսագրեր և այլն: Վորտանավորները վիբրել եմ մեր գասագրքերից, կրճատել:

համառոտել, չերբեմն նաև վորոշ բառեր փոխել եմ, չեթե ուղղագրական տեսակետից վորոշ դժվարութիւններ են ներկայացրել \ խմբի աշակերտները համար: Գրաւոր աշխատանքների նյութերը մեծ մասամբ չես եմ կազմել, մասամբ էլ մանավանդ Բ. մասի մեջ՝ փոխադրել եմ ուսուերենից կամ, փոփոխելով և հարմարեցնելով, վերցրել եմ մեր դասագրքերից և մտնկական ամսագրերից:

«Աշխատանքները» մեջ առաջագրութիւններն արվում են վոչ թե ուսուցչին, այլ աշակերտին. նրբանք այնքան պարզ և հասարակ ձևով են արվում, վոր ավելորդ եմ համարում այստեղ մեթոդական ցուցմունքներ և բացատրութիւններ առ յուրաքանչյուր աշխատանքի համար առանձին-առանձին: Կարծում եմ, ամեն մի ուսուցիչ իր չեռածուց աշխատանքի ծրագիրը կազմելիս նախապես կկարգա ամբողջ չեռածուցակի «աշխատանքները», կհարմարացնի իր խմբին, կկազմի իր «աշխատանքները» ավյալ իր խմբի համար և դպրոցական խորհրդի հաստատութից հետո միայն կսկսի նրանով անցնել: Պարզ է, վոր դրանից հետո չեղ ամեն շարաթվա համար նորից ավելի մանրամասն պիտի մշակել վորևե թեմալի կամ չենթաթեմալի աշխատանքները, առաջագրութիւններն աշակերտներին ավելի պարզ և հասկանալի պիտի արվեն: Այս գրքում առաջագրութիւնները շատ սեղմ են ձեվակերպված գրքի ծավալը շտովարացնելու նպատակով:

Աշխատանք 74-ից սկսած՝ այն վտանավորները, վորանք արված են վանկերի բաժանելու համար, գրվում են բառամիջի ը-ով: Մյուս վտանավորների

մեջ՝ առանց բառամիջի ը-ն գրելու չե տպված, վորպեսզի սովորութիւնն չդառնա աշակերտների համար բառամիջի ը-ն գրելը, վանկերի բաժանելու համար արված վտանավորներում գրվում է, վորպեսզի հեշտութիւնով կարողանան վանկերի բաժանել: Գրքում արված են 19 հանելուկ. պետք է նկարել այդ հանելուկների լուծումները և ապա արտագրել: Չսխալվելու համար այստեղ արվում են նրանց լուծումները:

### ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

ԱՇԽԱՏԱՆԲ 5.— ձմեռ, աշխ. 8.— ավել, աշխ. 14.— տաք, մալրը և աղջիկը, աշխ. 18.— ժամացույց, աշխ. 43.— գլուխը, աշխ. 46.— մկրատ, աշխ. 49.— հեշտալեռ, աշխ. 51.— սեղան, աթոռ, աշխ. 65.— խոզ, աշխ. 74.— արագիլ, աշխ. 84.— չեղան, գերանդի, աշխ. 87.— արտ, աշխ. 91.— կաղամբ, գաղար, աշխ. 101.— բերան, աշխ. 114.— ձու, աշխ. 118.— ճանճն առաստաղին, մրջնոց, աշխ. 123.— մրջնուն, աշխ. 127.— չորս չեղանակ, աշխ. 129.— ամիսները:

Մամիկոն Գասպարյան

## ՉՄՌԱՆ ՊԱՏԿԵՐԸ

ԱՇԽԱՏԱՆՔ 1. Տեղաբակի առանձին լեքետում արտագրեցեք սրացուլցի հունվարի 1-ի թերթիկը՝ այդ ամսվա նկարագրով:



ԱՇԽԱՏԱՆՔ 2. Նկարագրեցեք ձմռան պատկերը և ապա արտագրեցեք.

### Ձ Մ Ե Ռ

Ձյունն ու ցուրտ լեկավ,  
առու, գետ լոռեց,  
իր սպիտակ գորգը  
ձմեռը փռեց:

ԱՇԽԱՏԱՆՔ 3. (Կոլլեկտիվ աշխ.) Նկարեցեք ձնե մարդ և ապա արտագրեցեք.

### Մ ԵՐ ՈՐԱԳՐԻՑ

հունվարի 3-ին:

Մյուսը ձյուն չեկավ: Մենք շատ ուրախացանք:  
Չնագնդի խաղացինք և ձնե մարդ շինեցինք:

ԱՇԽԱՏԱՆՔ 4. Նկարեցեք ձյան փաթիլներ և ապա արտագրեցեք.

### Ձ Յ Ո Ւ Ն

Թե ձմեռ է ցրտաշունչ՝  
լինչ է թափում լուռ ու մունջ.  
— փաթիլ-փաթիլ փափուկ ձյուն՝  
արծաթի պես պոպոզուն:

ԱՇԽԱՏԱՆՔ 5. Արտագրեցեք այս հանելուկը և ապա փակագծում գրեցեք լուծումը.

**Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ**

Գցիր կամուրջ, փռիր կարպետ,  
այ անուրագ, անձեռ վարպետ ( . . . )

**ՉՄԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ  
ԸՆՏԱՆԻՔՈՒՄ**

ԱՇԽԱՏԱՆՔ 6. Նախ նկարեցեք և ապա գրեցեք,  
թե դուք ինչպես եք ոգնում ձեր անեցիներին:

**ԻՆՉՊԵՍ ԵՄ ՄԵՐ ՏՆԵՑԻՆԵՐԻՆ ՈԳՆՈՒՄ**

Մեր անասուններին խոտ եմ տալիս, վառարանի  
համար փայտ եմ բերում, կոտակերատիվ եմ գնում...

ԱՇԽԱՏԱՆՔ 7. Նախ նկարեցեք և ապա գրեցեք,  
թե ձեր ընտանիքում ո՞վ ինչ է անում:

**ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՄԵՐ ՏՆԵՑԻՆԵՐԸ**

Հայրս անտառը փայտի չե գնում, տանը փայտ և  
ջարդում, իսկ մայրս վառարանն է վառում, կերակուր  
է չեփում, ամաններ է լվանում, սուճն է ավրում:

ԱՇԽԱՏԱՆՔ 8. Նկարեցեք հանելուկի լուծումը և  
ապա արտագրեցեք:

**Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ**

Նստեղ լիզեմ, էնտեղ լիզեմ, դոսան լետեր պղզեմ:

ԱՇԽԱՏԱՆՔ 9. Առանձին թերթի վրա խոշոր տա-  
ռերով արտագրեցեք և տանը լվացարանի մոտ պա-  
տին փակցրեք:

**ԼԻՆԵՆԳ ԱՌՈՂՋ ՑԵՎ ՈՒԺԵՂ**

Առավոտյան սառնով լվա ձեռներդ, չերեսդ,  
պարանոցդ:  
Բերանդ վոզողիլը և խոզանակով ստամոքսդ  
մաքրիր:

ԱՇԽԱՏԱՆՔ 10 Շրջանակի մեջ արտագրեցեք:

Չեսը ձեռ կլվա,  
չերկու ձեռը՝ չերես:

**ՄԵՐ ՉՄԵՌԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ**

ԱՇԽԱՏԱՆՔ 11. Նկարագրեցեք խաղալիքներ և  
տակը գրեցեք նրանց անունները:

### ՄԵՐ ԽԱՂԱՆԻՔՆԵՐԸ

Տիկնիկ, թմբուկ, դնդակ, չմուշկ, սղզան, խորանարդիկ, հոլ:

ԱՇԽԱՏԱՆՔ 12. Այստեղից արտագրեցե՛ք միայն այն բաները, վորոնք ցույց են տալիս, թե ինչ է հազրած տիկնիկին:

### Տ Ի Կ Ն Ի Կ

Զարուհին նոր տիկնիկ ունի: Նրա հագին կա սպիտակ շապիկ, գուլնագուլն գուլպա և գեղին կոշիկներ:

Զարուհին տիկնիկի համար կարեց կարմիր դեյրա և չթե գոգնոց: Նրա գլխին կապեց մետաքսե թաշկինակ:

### ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ

ԱՇԽԱՏԱՆՔ 13. Այս ձևով գրեցեք ձեր ընտանիքի մասին:

### ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ

Յեռ իննը տարեկան եմ, անունս և Յոլակ: Ունեմ հայր ու մայր, չերեք չեղբայր և չերկու քույր: Մենք բոլորս կազմում ենք մի ընտանիք: Մեր ազգանունն է Հակոբյան:

1004  
81191  
16191

ԱՇԽԱՏԱՆՔ 14. Նկարեցեք հանելուկի յեռե՛ք հուգու՛ք և նկարի տակ արտագրեցե՛ք հանելուկը:

### Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Մայրն աղջկան հետ, դարձյալ մայրն աղջկան հետ և տատը թոռան հետ: Բայց ընդամենը չերեքն են:

ԱՇԽԱՏԱՆՔ 15. Այս ձևով գրեցե՛ք ձեր դասընկերների ծնողների դրադմունքը:

### ՈՒՄ ԾՆՈՂՆ ԻՆՉՈՎ Ե ՊԱՐԱՊՈՒՄ

Արամ Գրիգորյանի հայրը սպասավոր է:

Հայկ Հակոբյանի հայրը հողագործ է:

Աստղիկ Յեսայանի մայրը լվացարարուհի չե:

ԱՇԽԱՏԱՆՔ 16. Արտագրեցե՛ք միայն ազգական ցույց տվող բաները:

### ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՅԵՎ ԴՊՐՈՑՈՒՄ

Հայր, ունուցիչ, մայր, աշակերտ, քույր, բժիշկ, չեղբայր, ընկեր, հորաքույր, պիոներ, մտրեղբայր, ըսպասավոր, պապ, վարիչ, տատ, հոկանմերիկ, մորաքույր, աշակերտուհի:

ԱՇԽԱՏԱՆՔ 17. Մի մեծ թերթի վրա գրեցե՛ք և տանը պատին փակցրեք մահճակալի մոտ. նույնը արտագրեցեք տետրերում:



### ՊԼԱԿԱՏ ԲՆԻ ՄԱՍԻՆ

Մեզրը քաղցր և շաքարից,  
քունը՝ մեղրից, շաքարից:

1. Որական 10 ժամ քնիր.
2. Գլուխդ վերմակով մի ծածկիր.
3. Անկողինդ մաքուր պահիր.

ԱՇԽԱՏԱՆՔ 18. Նկարեցե՛ք հանելուկի լուծումը  
և ապա արտագրեցե՛ք.

### Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Վոռք չունիմ, բայց քայլում եմ.  
Բերան չունեմ, բայց ասում եմ.  
— Յերբ պիտի քնեք, լերբ վեր կենաք:

### ԼԵՆԻՆԻ ՄԱՅՎԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

ԱՇԽԱՏԱՆՔ 19. Հին լրագրներից կամ որացույցի  
թերթիկներից հանեցե՛ք Լենինի պատկերը, փակ-  
ցրե՛ք տետրակի մի առանձին լերեսում և տակն ար-  
տագրեցե՛ք.

### ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉ ԼԵՆԻՆ

Լենինը բոլոր բանվորների ղեկավարն է.

Լենինն ասում է՝  
սովորիր, աշխատիր, շինիր.

Հոկտեմբերիկը կատարում է Լենինի ասած-  
ները.

ԱՇԽԱՏԱՆՔ 20. Նկարեցե՛ք հոկտեմբերիկ և խո-  
շոր տառերով արտագրեցե՛ք հոկտեմբերիկների սովո-  
րությունները.


### ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

1. Հոկտեմբերիկն ոգնում է պիտներներին, կոմ-  
յերիտականներին, կոմունիստներին, բանվորներին և  
գյուղացուն:
2. Հոկտեմբերիկը ձգտում է պիտներ դառնալու:
3. Հոկտեմբերիկը հետևում է իր մարմնի և հա-  
գուստի մաքրության:
4. Հոկտեմբերիկը սիրում է աշխատել:

### ՄԵՐ ԽՈՒՄԲԸ

ԱՆՆԱՏԱՆՔ 21. Այս պլակատները մի առանձին  
լերեսի վրա արտագրեցե՛ք. հաջող գրվածներին չե-  
ր-

կուսը փակցրեք պատին՝ դասարանում և միջանցքում:



ԱՇԽԱՏԱՆՔ 22. Այս ձևով նամակ գրեցեք ձեր մոտիկ ազգականներին.

**ՍԻՐԵԼԻ ՀՈՐԵՂԻՍՅՐ.**

Յես հիմա կարող եմ կարգալ գրել և նկարել տես, քեզ նամակ եմ գրում: Յես առաջ նկարել չեյի կարողանում, բայց ողակի ընկերներիցս մեկն ինձ սովորեցրեց:

Համբուրում եմ քեզ:

Քո՝ Գրիգոր

ԱՇԽԱՏԱՆՔ 23. Նկարեցեք գրենական պիտույքները և տակը գրեցեք անունները.

ԻՄ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԸ.

Դասագիրք, տետրակ, գրչակոթ, ծայր, մատիտ,

թանաքաման, ուտին, քանոն, գրչաման, վրձին, ջրաներկ, համրիչ:

ԱՇԽԱՏԱՆՔ 24. Այս ձևով գրեցեք, թե ով ում հետ և նստում.

**ՈՎ ՈՒՄ ՀԵՏ Ե ՆՍՏՈՒՄ**

Գրիգորը Արուսյակի հետ.

Անահիտը Ասողիկի հետ.

Աղափին Մկրտչի հետ.

Արմենակը Գասպարի հետ.

ԱՇԽԱՏԱՆՔ 25. Այս ձևով գրեցեք ձեր խմբի ընտրությունների մասին.

**ՄԵՐ ՈՐԱԳՐԻՑ**

Հունվարի 27-ին.

Այսօր մեր դասարանական ժողովում նախագահ ընտրեցինք Ասողիկ Յեսայանին, իսկ մաքրության հսկիչներ՝ Անահիտ Թոմասյանին և Դավիթ Գևորգյանին:

ԱՇԽԱՏԱՆՔ 26. Այս ձևով այբուբենական կարգով կազմեցեք ձեր խմբի հերթապահների շաբաթական ցուցակը.

**ՄԵՐ ԽՄԲԻ ՀԵՐԹԱՊԱՀՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ.**

Ամսաթիվ	Ո Ր	Ազգանուն և անուն
28	Ուրբաթ	Ավագյան Սմբատ
29	Շաբաթ	Բաղալյան Արտաշես
30	Կիրակի	— —
31	Յերեւոյաբթի	Գրիգորյան Խաչիկ

**Տեղեկագրք.** Աս Բր Գգ Դդ Եե Զզ Էը Թթ Ժժ Իի Լլ Խխ Ծծ Կկ Հհ Զճ Դդ Ճճ Մմ Յյ Նն Շշ Ոո Զզ Պպ Ջճ Ռռ Սս Վվ Ծծ Սս Բր Յց Փփ Բբ Ցց

**ԱՇԽԱՏԱՆՔ 27.** Արտագրեցեք այբուբենական կարգով.

Վարդանուշ, Ամալիա, Գրիգոր, Յուլի, Միրանուշ, Հայկ, Սաչիկ, Զարուհի, Մարտիկ, Արփենիկ, Գեղամ, Հովհաննես.

**ԱՇԽԱՏԱՆՔ 28.** Արտագրեցեք նախ՝ տղաների, ապա՝ աղջիկների անունները. տես նախորդ աշխատանքը:

**ԱՇԽԱՏԱՆՔ 29.** Փետրվարի 1-ին տետրակի նոր չերեսում արտագրեցեք որացույցի թերթիկը այդ ամսվա նկարագրով:

**ՓԵՏՐՎԱՐ**

I

**ԶՈՐԵՔՇԱԲԹԻ**

Փետրվարին սկսվում է  
փոփոխակի ցուրտ ու տաք որ:

### ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ

**ԱՇԽԱՏԱՆՔ 30.** Եքսկուրսիա կազմակերպեցեք զեպի գյուղխորհուրդը, խրճիթ-ընթերցարանը, կոոպերատիվը և այլ ցուցանակ ունեցող հիմնարկները և արտագրեցեք այդ հիմնարկների անուններն այսպես.

### ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑ, ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴ, ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ, ԿՈՈՊԵՐԱՏԻՎ, ՓՈԿ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅԱՆ, ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱՅԱՆ:

**ԱՇԽԱՏԱՆՔ 31.** Այս ձևով գրեցեք.

### ՄԵՐ ԳՅՈՒՂԻ

- Գյուղխորհրդի նախագահը . . . . .
- Դպրոցի վարիչը— . . . . .
- Խրճիթվարը— . . . . .
- Փոկի նախագահը— . . . . .
- Կոոպերատիվի վարչութիան նախագահը— . . . . .
- Գյուղատնտեսը— . . . . .
- Բուժակը— . . . . .
- Կուլվարը— . . . . .

**ԱՇԽԱՏԱՆՔ 32.** Այբուբենական կարգով գրեցեք ձեր գյուղխորհրդի նախագահութիան կազմը. **ՄԵՐ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ**

(Ազգանունները խառը գրել)

- 1 . . . . .
- 2 . . . . .
- 3 . . . . .

ԱՇԽԱՏԱՆՔ 33. Արտագրեցէք այս հարցաթերթը  
և ամեն մեկդ պատասխանեցէք ձեզ համար.

**ՀԱՐՅԱԹԵՐԹ**

- Քո անունն ու ազգանունը . . . . .
- Քեզ խնամողի անունը . . . . .
- Վճրտեղ և ծառայում նա . . . . .
- Վճր գյուղում (քաղաքում) ես ապրում . . . . .
- Վճր փողոցի վրա չե բնակարանը . . . . .
- Ինչպէս և կոչվում ձեր գյուղին մտնիկ քաղաքը . . . . .
- Ինչպէս և կոչվում ձեր գյուղին մտնիկ յերկաթ-  
գծի կայարանը . . . . .

**ՔԱՂԱՔԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ ԿԱՊԸ**

ԱՇԽԱՏԱՆՔ 34. Գրեցէք, թե ի՞նչ և տալիս ձեր  
գյուղը քաղաքին.

**ԻՆՉ Ե ՏԱԼԻՍ ՄԵՐ ԳՅՈՒՂԸ ՔԱՂԱՔԻՆ**

**Տեղեկանք.** Կաղամբ, կարտոֆիլ, յուղ՝ պանիր,  
կաթ, մածուն, հափ, փայտ, բուրդ, խոտ, գազար, ճա-  
կընդեղ, ձու, բամբակ, ծխախոտ, գինի:

ԱՇԽԱՏԱՆՔ 35. Գրեցէք, թե վերջին ամսում  
ձեր գյուղացիները ի՞նչ են գնել քաղաքում:

**ԻՆՉ Ե ՏԱԼԻՍ ՔԱՂԱՔԸ ԳՅՈՒՂԻՆ**

**Տեղեկանք.** Զիթ, կտավ, կոշիկ, կահկարասի, ա-

մանեղեն, սոցոց, մուրճ, աղ, գութան, լամպ, նավթ  
գուլ, սապոն, թիւ, շաքար, գիրք, մանգաղ, գերանդի:

ԱՇԽԱՏԱՆՔ 36. Եկարեցէք մուրճ և մանգաղ և  
ապա արտագրեցէք միանգամից՝ տող-տող: Ա, ս, ու,  
ի, հ, ը ձայնավորներն ընդգծեցէք,

**ԳՅՈՒՂԱՅԻՆ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԸ**

Կյանքը հիմա արդեն նոր է,  
այդ մանուկներն ել գիտեն.  
տեր են ոսնչպարն ու բանվորը.  
Դէ, աշխատանքը սիրենք:

ԱՇԽԱՏԱՆՔ 37. (կող. աշխատանք) Կազմեցէք  
խոսքեր հետևյալ բառերով: Յա. չու, չո, չե, աչ, ույ,  
հչ. յերկձայններն ընդգծեցէք:

Հարություն, հորեղբայր, չեզ, սայլ, գյուղ, լուղ,  
փայտ, լուսնյակ, լոթը, գուլ, թիւ, հարչուր:

**ԱՐՅԵՍՏԱՎՈՐՆԵՐ**

ԱՇԽԱՏԱՆՔ 38. Գրեցէք հետևյալ արհեստավոր-  
ների անունները այբուբենական կարգով:

**ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐ**

Վարսավեր, ներկարար, հացթուխ, կոշկակար,  
տակառագործ, ատաղձագործ, դերձակ, դարբին, ան-  
վագործ, փակահագործ, բրուտ:

ԱՇԽԱՏԱՆՔ 39. Նկարեցեք ձեր ընտրութեամբ արհեստավորներ՝ իրենց աշխատանքը կատարելիս և տակը գրեցեք.

ՈՎ ԻՆՉ Ե ԱՆՈՒՄ

Կոշկալարը կոշիկ և կարում: —... հագուստ և կարում: —... յերկաթ և կում: —... սեղան և շինում: —... առաստաղ և ներկում: —... հաց և թխում: —... տակառ և շինում: —... գլուխ և խուզում:

**Տեղեկացեք.** Տես նախորդ աշխատանքը:

ԱՇԽԱՏԱՆՔ 40. Եքսկուրսիա կազմակերպեցեք գեպի քաղաքի փողոցները, նայեցեք արհեստանոցների ցուցանակներին, նրանցից հաջող գրվածներն ու նկարվածներն անցկացրեք ձեր տետրներում՝ հետևելով վերնազրույթ:

ՄԵՐ ՔԱՂԱՔԻ ԱՐՋԵՍՏԱՆՈՅՆԵՐԸ

ԱՇԽԱՏԱՆՔ 41. Նկարեցեք դարբնին՝ զնդանի վրա կոտանով յերկաթ ձեծելիս և տակը շրջանակի մեջ արտագրեցեք.

Յերկաթը տաք-տաք կծեճեն

ԱՇԽԱՏԱՆՔ 42. Շրջանակի մեջ արտագրեցեք.

ԼԻՆԵՆՔ ԱՌՈՂՉ  
Մազերդ մի պահի,  
այլ հաճախ խուզեր:

ԱՇԽԱՏԱՆՔ 43. Նկարեցեք հանելուկի լուծումը և ապա արտագրեցեք.

**ՀԱՆԵԼՈՒԿ**

Մի արտ ունեմ. տարին տասներկու ամիս կը կտրեմ, ելի կրուսնի:

ԱՇԽԱՏԱՆՔ 44. Արհեստանոցներն եքսկուրսիա կատարած ժամանակ դիտեցեք արհեստավորներին գործածած գործիքները և ապա գրեցեք ձեր տետրակում՝ համապատասխան նկարներ անելով.

ԻՆՉ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՄ ՏԵՍԵԼ ԱՐՋԵՍՏԱՆՈՅՆԵՐՈՒՄ

**Տեղեկացեք.** Մկրտտ, դանակ, դուր, ուրագ, բիզ, ունելիք, մուրճ, սղոց, ասեղ, կոտան, քանոն, զծագրական յեռագկյուց, կարկին, «սանտիմետր»:

ԱՇԽԱՏԱՆՔ 45. Տետրակի չերեսի յերկու կողքերը նկարեցեք ուրագ և սղոց ու ապա արտագրեցեք տող-տող: Չաչնավորներն ընդգծեցեք:

ՈՒՐԱԳ ՈՒ ՄՂՈՅ

Մի լինի ուրագի պես  
միշտ գեպի քեզ, միշտ գեպի քեզ.  
այլ չեղիր սղոցի պես՝  
մին գեպի քեզ, մին գեպի մեզ:

ԱՇԽԱՏԱՆՔ 46. Նկարեցեք հանելուկի լուծումը և ապա արտագրեցեք.

**ՀԱՆԵԼՈՒԿ**

Յերկու ծայր, յերկու սղակ,  
իսկ մեջտեղը՝ բեհասակ:

ԱՇԽԱՏԱՆՔ 47. Լրացրէք.  
ՎՈՐ ԳՈՐԾԻՔՈՎ ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ.

- Դանակով կտրում են
- Բզով . . . . .
- Մուրճով . . . . .
- Սղոցով . . . . .
- Ուրագով . . . . .
- Մկրատով . . . . .
- Ունելիքով . . . . .
- Դուրով . . . . .

**Տեղեկացք.** Սղոցում են, ծակում են, խփում են  
տաշում են, բռնում են, ձևում են, հարթում են:

ԱՇԽԱՏԱՆՔ 48. Ամեն մեկը ասացէք, թե ինչ ամաններ եք գործածում ձեր տանը. գրատախտակին գրեցէք ձեր դասարանցիների ընտանիքում գործածած ամանների անունները և ապա արտագրեցէք այն ամանները, վորոնք միայն ձեր տանն են գործածում:

ԻՆՉ ԱՄԱՆՆԵՐ ԵՆՔ ԳՈՐԾԱԾՈՒՄ ՄԵՐ ՏԱՆԸ

**Տեղեկացք.** Թեյաման, տակոս, կճուճ, հեշտայեռ, պնակ, շիշ, շերեփ, դուլլ, կուժ, կուլա, պուլիկ, կաթնաման, խնոցի, ջրաման:

ԱՇԽԱՏԱՆՔ 49. Նկարեցէք հանելուկի լուծումը և ապա արտագրեցէք.

**ՀԱՆԵԼՈՒԿ**

Վերեր ծակ, ներքեր ծակ,  
մեջը լիքը ջուր ու կրակ:

ԱՇԽԱՏԱՆՔ 50. № 48 աշխատանքի ձևով գրեցէք ձեր տան կահկարասիների անունները.

ԻՆՉ ԿԱՀԿԱՐԱՍԻՆԵՐ ԿԱՆ ՄԵՐ ՏԱՆԸ

**Տեղեկացք.** պահարան, բազկաթոս, աթոս, բազմոց, հենաթոս, մահճակալ, սեղան, նստարան, տախտ, աթոռակ, գրասեղան:

ԱՇԽԱՏԱՆՔ 51. Նկարեցէք հանելուկների լուծումները և ապա արտագրեցէք:

**ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ**

1

Չորս յեղբայր են՝ մի գղակ ունեն:

2

Վրտք ունի, բայց չի քալում.  
մեջք ունի, բայց չի պտտկում:

ԱՇԽԱՏԱՆՔ 52. Այս ձևով կազմեցէք ձեր ժողովի արձանագրությունը: Յերկձայներն ընդգծեցէք:

Արձանագրություն

Ա. խմբի դասարանական ժողովի.

Փետրվարի 27-ին Ս դասին

Ժողովի նախագահ ընտրվեց Հարությունը,

իսկ քարտուղար՝ Արուսյակը:

Ժողովը դասկոմի անդամներ ընտրեց՝ Հայկին Արշալույսին և Յեսթերին:

Ժողովի նախագահ՝ Հ. Արամյան

Ժողովի քարտուղար՝ Ար. Թոմասյան

ԱՇԽԱՏԱՆՔ 53. Արտագրեցէք և յերկձայներն ընդգծեցէք

### ՄԵՐ ՈՐԱԳՐԻՑ

Փետրվարի 28-ին.

Այսօր Հայկի հայրը և Արշալույսի յեղբայրը մեր դպրոցի համար 2 սայլ փայտ բերին. Հայկանուշի մորաքույրը յեկել եր գաս լսելու:

ԱՇԽԱՏԱՆՔ 54. Մարտի 1-ին տետրակի նոր յերեսում արտագրեցեք որացուցի թերթիկը՝ այդ աստվա նկարագրով:

**ՄԱՐՏ**

**!**

**ԶՈՐԵՔՇԱՐԹԻ**

Մարտին գեան և կըլկըլում,  
Ջյունն ու սառուցն և հալվում

ԱՇԽԱՏԱՆՔ 55. Արտագրեցեք և բառի յուրաքանչյուր մասում ընդգծեցեք ձայնավորները:

### ԱՐԻ ԳԱՐՈՒՆ

Կա-րոտ ենք տես-քիդ, ան-նը-ման գարուն,  
շուտ ա-րի մեզ մոտ, բեր ծա-ղիկ սի-րուն,  
բեր պալ-ծառ ա-րև, բեր մեզ տաք ո-րեր,  
ծըլ-վը-լող թըռ-չուն, բեր կա-նաչ դաշ-տեր:

ԱՇԽԱՏԱՆՔ 56. Վոր բառերը, վոր կարելի յե, բաժանեցեք զծիկներով մասերի: Զայնավորներն ընդ-գծեցեք:

### Մ Ա Ր Տ

Մին հագնում և սպլտակ,  
մին կանաչին և տալիս,  
մի որ ցուրտ և, մի որ տաք.  
Ա՛խ, եսպես ել զիժ ամբս:

ԱՇԽԱՏԱՆՔ 57. Նախ՝ արտագրեցեք մեկ, սպա՛ չերկու, հետո՝ յերեք մասից կազմված բառերը և նը-բանց մեջ ձայնավորներն ու չերկձայներն ընդգծեցեք:

### ՄԵՐ ՈՐԱԳՐԻՑ

Մարտի 4-ին

Հայկը սալից վայր ընկավ. նրա քույրը վագեց մայրիկի մոտ. մայրիկը դուլով ջուր բերեց և Հայկի յերեսի արջունը մաքրեց: Նրանք ալեա ոյ, ույ, վայ, վույ չեյին անում:

ԱՇԽԱՏԱՆՔ 58. Հետևյալ բառերի մասերին այն-պես ավելացրեք նոր մասեր, վոր ստացվեն լրիվ բա-

ներ: Լրացրած բառերն արտագրեցեք մասերի (վանկերի) բաժանած:

**ՎԱՆԿԵՐԻ ԽԱՂ (ՎԵՐՋՈՒՄ ԼՐԱՑՆԵԼՈՎ)**

Գա —, ծա —, թրու —, ա —, կա —, պալ —, ձնծա —, տ —, սա —, հալ —, կա —, տննը —, սի —, մանու —, տե —:

**Տեղեկագեք.** զիկ, չուն, բուն, միս, ծառ, նաչ, վում, ման, բան, շակ, զան, բե, ուուց:

ԱՇԽԱՏԱՆՔ 59. Արտագրեցեք բառերը՝ միջում հարմար վանկ (բառի մաս) մտցնելով:

**ՎԱՆԿԵՐԻ ԽԱՂ (ՄԻՋՈՒՄ ԼՐԱՑՆԵԼՈՎ)**

Թե — ° — ման, ինք — ° — լիս, պա — ° — բան, մահ — ° — կալ, նըս — ° — բան, բազ — ° — թոռ, պա — ° — հան, լու — ° — մուտ:

ԱՇԽԱՏԱՆՔ 60. Լրացրեք և ապա արտագրեցեք՝ սողադարձի համար վանկերի բաժանելով այս ձևով.

Յո-	Ար-	Արիե-
լակ	փենիկ	նիկ
Համբար- ձումյան	Համբար- ձումյան	Համբարձում- յան

**ԱՆՈՒՆՆԵՐ**

Մար — 8, Կոմի — 10, Արիստա — 1/2, Վարդ — 1/2

ԱՇԽԱՏԱՆՔ 61. Նախ արտագրեցեք միավանկ, ապա՝ յերկվանկ, հետո՝ մնացած բազմավանկ բառերը: Ինչո՞ւ միևնույն բառը մի տեղ մեծատառով և գրված, մյուս տեղ՝ փոքրատառով:

**Վարժուբյուցներ**

Վաղ առավոտյան՝ արշալույսին վոչ ձի աստղիկ չեր յերևում յերկնքում: Ազատ նկարչության դասին Արշալույսը նկարել էր վարդ, իսկ Աստղիկը՝ հասմիկ: Այսոր բացակայում են Վարդը և Հասմիկը:

**ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ**

ԱՇԽԱՏԱՆՔ 63. Գրեցեք նախ՝ մտակեր, ապա՝ խոտակեր ընտանի կենդանիների անուններ:

Մսակեր կենդանիներ | Խոտակեր կենդանիներ

**Տեղեկագեք.** Եշ, գոմեշ, ձի, կով, խոզ, վոչխար, շուն, կատու այծ, լեզ:

ԱՇԽԱՏԱՆՔ 62. Լրացրեք.

**ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԶԱՅՆԵՐԸ**

Կովը բտաշում և: Զին. . Վոչխարը... Շունը... Կատուն... Այծը... Եշը ..

**Տեղեկագեք.** զոռւմ և, հաջում և, մրկըկում և, խրխնջում և, մաչում և, մլավում և:

ԱՆԽԱՏԱՆՔ 64. Լրացրեք

**ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈԳՈՒՏԸ**

Զին քաշում ե . . . . .

Կովը տալիս ե . . . . .

Սողը տալիս ե . . . . .

Կատուն լունում ե . . . . .

Շունը պահում ե . . . . .

Վոչխարը տալիս ե . . . . .

**Տեղեկացե՛ք.** Բուրդ, մազ, սալ, ճարպ, կառք, մուկ, միս, կաշի, սունը:

ԱՇԽԱՏԱՆՔ 65. Նկարեցեք հանելուկի լուծումը և ապա արտագրեցեք:

**Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ**

Վոչ մի տեղն ել չի ցավում, բայց ամբողջ որը տնքալով ման ե գալիս:

ԱՇԽԱՏԱՆՔ 66. Գրեցեք նախ՝ այժի, ապա՝ կառվի ասածները.

**Ո Վ Ի Ն Չ Ե Ս Ի Ր Ո Ւ Մ**

... ասավ. «Ամենից լավը կաթն ե. ասենք՝ մուկն ել վառ չի, բայց բռնելը դժվար ե»:

... ասավ. «Դու ել բանի անուն տվիր, ելի. ան, վոսկոր, ջան վոսկոր» . . .

... ասավ. «Ինձ հարցնեք՝ մի փունջ խոտն ամենից լավն ե»:

ԱՇԽԱՏԱՆՔ 67. Արտագրեցեք մի հատ կենդանի ցուլց տվող բառերը և նրանց մեջ այ և չե չերկձայնները ընդգծեցեք.

Այծ, այծեր, յեղներ, չեզ, շուն, շներ, վոչխարներ, վոչխար, կատու, կատուներ, ձիեր, ձի, կով, կովեր, խոզեր, խոզ:

**ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ**

ԱՇԽԱՏԱՆՔ 68. Գրեցեք ձեր ծանոթ վայրի կենդանիների անունները. չեթե կարող եք՝ նկարեցեք:

**ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՑ ԻՆՁ ԾԱՆՈԹ ԵՆ**

**Տեղեկացե՛ք.** Մուկ, արջ, նապաստակ, վոզնի, դալ, չեղջերու, աղվես, սկյուռ:

ԱՇԽԱՏԱՆՔ 69. Արտագրեցեք վանկերի բաժանած և վանկերի մեջ ձայնավորներն ընդգծեցեք.

**Ա Ղ Վ Ե Ս**

Աղվես, աղվես, դեղով դեղվես,

աղով աղվես, մաղով մաղվես,  
դետին թաղվես, պատից կախվես:

**ԱՇԽԱՏԱՆՔ 70.** Արտագրեցեք մեկից ալիլի կենդանիներ ցույց տվող բառերը և նրանց մեջ աչ, չե, ու չերկձայններն ընդգծեցեք:

Աղվես, աղվեսներ, գալլ, դալլեր, սկյուռներ, սկյուռ, նապաստակ, նապաստակներ, վողնի, վողնիներ, արջեր, արջ, չեղջերու, չեղջերուներ:

**ԱՇԽԱՏԱՆՔ 71** Լրացրեք.

**ԸՆՏԱՆԻ ՅԵՎ ՎԱՅՐԵՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ**

- Կովն ընտանի կենդանի չե
- Գալլ . . . . .
- Վոչխարը . . . . .
- Արջը . . . . .
- Շունը . . . . .
- Զին . . . . .
- Նապաստակը . . . . .
- Այծը . . . . .
- Սկյուռը . . . . .
- Յեղջերուն . . . . .

**Տեղեկացե՛ք.** Ընտանի կենդանի չե, վալրի կենդանի չե:

**ԹԹՉՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ**

**ԱՇԽԱՏԱՆՔ 72.** Նկարեցեք արագիլը բնում և այդա՛ շրջանակի մեջ արտագրեցեք.

Մարտի քսաներկուսին,  
արագիլն իր բնին:

**ԱՇԽԱՏԱՆՔ 73.** Իմացեք, թե ինչ չվող թռչուններ են վերադառնում ձեր գյուղը. գրեցեք նրանց անունները:

**ՄԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՉՎՈՂ ԹԹՉՈՒՆՆԵՐԸ**

**Տեղեկացե՛ք.** բազե, փալափոր, կոռնկ, կաշաղակ, սոխակ, արագիլ, արծիվ:

**ԱՇԽԱՏԱՆՔ 74.** Նկարեցեք հանելուկի լուծումը և ապա՛ արտագրեցեք վանկերի բաժանամ.

**Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ**

Մի թռչուն կա սպիտակ,  
վիզը չերկար ու բարակ,  
վտաները ձիգ, ալլանդակ.  
Թըսիչք ունի համարձակ:

ԱՇԽԱՏԱՆՔ 75. Առանձին թերթի վրա խոշոր տառերով արտագրեցեք և փակցրեք ստանը.

**Մ Ե Ր Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ն Ե Ր Ը**

Պաշտպանեցեք սարյակներին.  
նրանք մեր բարեկամներն են

**Գ Ա Ր Ն Ա Ն Ս Կ Ի Զ Բ Ը**

ԱՇԽԱՏԱՆՔ 76. Նկարեցեք ձնծաղիկ ու մանուշակ և ապա արտագրեցեք՝ վանկերի բաժանած.

**Ա Ռ Ա Զ Ի Ն Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր**

Վերջին ձյունը դեռ չի հալել,  
ձընծաղիկն և արդեն ծղլել,  
մանուշակն և զարթնել քջնից,  
չես կջշտանա անուշ հոտից:

ԱՇԽԱՏԱՆՔ 77. Ինքներդ վերնագիր գրեք և արտագրեցեք՝ վանկերի բաժանած (առանց հարցի):

**Յ Ե Ր Բ Ե Լ Ի Ն Ո Ւ Մ**

Ջյունն և հալչում,  
խոտը կանաչում,

ծաղիկը ծաղկում,  
որը չերկարում:

ԱՆՆԱՏԱՆՔ 78. Արտագրեցեք՝ վանկերի բաժանած.

**Մ Ե Ր Ո Ր Ա Գ Ր Ի Ց**

մարտի 29-ին.

Յերեկ առաջին անգամ ձնծաղիկ բերին դպրոցը:  
Մենք շատ ուրախացանք: Վորոշեցինք հիմք դնել  
կենդանի անկյան, վորի կազմակերպման համար ընտ-  
րեցինք Վարդանուշին, Ամալիային և Սպարտակին:

ԱՇԽԱՏԱՆՔ 79. Ապրիլի 1-ին... տես աշխատանք 54:

**Ա Պ Ր Ի Լ**



**Շ Ա Բ Ա Ռ**

Մարտն անցավ, հասավ ապրիլ գեղեցիկ,  
հեռու աշխարհից չեկավ ծիծեռնիկ:

Ապրիլը տալիս է կապույտ մանուշակ.

## ԳԱՐՆԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔ 80. Ընդգծեցեք այն բառերը, վորոնցից հետո ձայնն իջնում է և դադար է լինում: Ի՞նչ կետ է դրված այդտեղ: Վերջակետից հետո ինչպիսի տառով է գրվում:

### Գ Ա Ր Ն Ա Ն Գ Ա Լ Ը

Որերը տաքանում են: Աղավնիները զունզունում են կտուրների վրա: Բաղերը մտել են գետակը: Ծրտերն ուրախ ծըլվելում են: Յերեխաներն ուրախ խաղում են զրսում:

ԱՇԽԱՏԱՆՔ 81. Տես աշխատանք 80.

### Գ Ա Ր Ո Ւ Ն

Գարուն է: Ողջ տաք ու պայծառ է: Լեռների շրջանները գեռ սպիտակին են տալիս: Դաշտերն արդեն զարդարված են գույն-գույն ծաղիկներով: Ողջ լի յե անուշ հոտով: Թռչուններն ուրախ լերգում են ծառերի վրա:

## ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔ 82. Խոշոր տառերով գրեցեք մի առանձին թերթի վրա, շրջանակի մեջ առեք և փակցրեք տանը պատին:

### ԺԱՄԱՆԱԿՆ Ե

Ժամանակն է՝ արտը վարելու,  
Ժամանակն է՝ բանջարանոցը փորելու,  
Ժամանակն է՝ ցանելու, սերմելու, տնկելու:

ԱՇԽԱՏԱՆՔ 83. Թվեցեք, թե ձեր գյուղում գյուղատնտեսական ինչ գործիքներ են գործածում: Գրեցեք այդ բոլորը գրատախտակին և ապա՝ արտագրեցեք ձեր տետրերում միայն ձեր տնտեսութչան մեջ գործածվող գործիքները:

### ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Տեղեկագր. — Մանգաղ, գերանդի, ցնցուղ, չեղան, փոցիս, տափան, գուլթան, բահ, տրակտոր, քամհար մեքենա:

ԱՇԽԱՏԱՆՔ 84. նկարեցեք հանելուկների լուծումները և ապա արտագրեցեք:

### ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ

1.

Ո՛վ է խոտն ուտում առանց բերանի, լերեր ա-  
տամով:

2.

խոտ կխժռեմ, ատամս կփշրեմ,  
ավագ կծամեմ—նորից կհնձեմ:

ԱՇԽԱՏԱՆՔ 85. Լրացրեք.

#### ՎՈՐ ԳՈՐԾԻՔՈՎ ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ

Մարդերը փորում են բահով  
Հողը վարում են . . .  
Արտը տափանում են . . .  
Սոտը հավաքում են . . .  
Ցորենը հնձում են . . .  
Մարդը ջրում են . . .

**Տեղեկացե՛ք.**—Ցեղանով, տափանով, գերանդիով,  
գուլթանով, փոցխով, ցնցուղով:

ԱՇԽԱՏԱՆՔ 86. Նկարեցե՛ք սերմնացան և ապա՝  
արտազրեցե՛ք վանկերի բաժանամ:

#### ՍԵՐՄԱՅԱՆԻ ՅԵՐԳԸ

Յես քեզ կըծածկեմ  
հողով վերևից,  
ծարավ չեմ թողնի,  
ջուր կըտամ առվից:

Շուտով կըզարթնես,  
չես քնա հողում,  
կըծիս, ծաղկիս,  
կարձակես ցողուն:

ԱՇԽԱՏԱՆՔ 87. Նկարեցե՛ք հանելուկի լուծումը  
և ապա արտազրեցե՛ք.

### ՀԱՆՆԵԼՈՒԿ

Ան հինեմ, կանաչ գործեմ, գեղին կարեմ:

ԱՇԽԱՏԱՆՔ 88. արտազրեցե՛ք և սովորեցե՛ք ա-  
րագ ասել:

### ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Ցորեն հաց՝ նանի թխած,  
թրջի, շուռ տուր, կակղի՝ կուլ տուր:

ԱՇԽԱՏԱՆՔ 89. Այս ձևով պահեցե՛ք ձեր տըն-  
տեսութեան ցանքսի որացուցը:

### ՅԱՆԲՍԻ ՈՐԱՑՈՒՅՑ

Հաչրս ցանել է.	Ա.ի.ս.	Թ.ի.վ.	Ի՞նչ ոգնու թչուն եմ ցույց տվել չես.
Ցորեն			
Գարի			
Կարվհատ			

ԱՇԽԱՏԱՆՔ 90. Թվեցեք, թե ձեր դասընկերները ծնողներն ի՞նչ բանջարներ են ցանել: Գրեցե՛ք այդ բոլորը գրատախտակին և ապա ձեր տետրերում արտագրեցե՛ք միայն ձեր տնտեսութեան մեջ ցանված բանջարներն այս վերնագրով:

**ԻՆՉ ԵՆՔ ՅԱՆԵԼ ԲԱՆՋԱՐԱՆՈՑՈՒՄ**

**Տեղեկացե՛ք.**— Կարտոֆիլ, կաղամբ, վարունգ, սոխ, սիսեռ, գազար, շաղգամ, ճակնդեղ, ամսական բողկ, բողկ, համեմ, սամիթ:

ԱՇԽԱՏԱՆՔ 91. Նկարեցե՛ք հանելուկների լուծումները և ապա արտագրեցե՛ք:

**ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ**

1.

Պատալը կանգնել և առվին,  
քառասուն ծալ շոր հագին:

2.

Պապս գետնի տակին,  
մերուքը յերեսին:

ԱՇԽԱՏԱՆՔ 92. Տես աշխատանք 82.

**ԺԱՄԱՆԱԿՆ Ե.**

Ժամանակն է՝ նախիրը հանդ քշելու,  
Ժամանակն է՝ վոչխարն արոտ տանելու,  
Ժամանակն է՝ փեթակները բանալու:  
— Ժամանակն անցավ տանը նստելու:

ԱՇԽԱՏԱՆՔ 93. Լրացրե՛ք.

**ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՁԱԳԵՐԸ**

- Քոթոթն արջի ձագն և
- . . . վոչխարի ձագն և
- . . . այծի ձագն և
- . . . ձիու ձագն և
- . . . շան ձագն և
- . . . խոզի ձագն և
- . . . հավի ձագն և

**Տեղեկացե՛ք.**— Գոճին, ճուտը, լավտաը, քուտակը, ուլը, գառը:

ԱՇԽԱՏԱՆՔ 94. Լրացրե՛ք.

**ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՒՏԵԼԻՔԸ**

- Կոփը ուտում է խոտ: Կատուն . . . : Գալը . . . :
- Ձին . . . : Կաշաղակն . . . : Այծն . . . : Վոչ-
- խարն . . . : Խոզն . . . : Բաղն . . . : Նապաս-
- տակն . . . : Համը . . . : Աղվեսն . . . :

**Տեղեկացե՛ք.**— Կանաչ, վորդ, արմաթ, հավ, մուկ, հատիկ, խոտ, գարի:

ԱՇԽԱՏԱՆՔ 95. Լրացրե՛ք.

**ՈՎ ԻՆՉՊԵՍ Ե ՇԱՐԺՎՈՒՄ**

- Ձուկը լողում է: Անձրևորդը . . . : Թիթեռը . . . :
- Կովը . . . : Ծիծեռնակը . . . : Գալը . . . : Նա-

պատակը . . . : Գորարը . . . : Մոծակը . . . :  
Մողեսը . . . : Ծխարը . . . : Ոձը . . . :

**Տեղեկագրք.**—Վագրում է, քաղցում է, թռչում է,  
լողում է, սողում է, ցատկում է:

ԱՇԽԱՏԱՆՔ 96 Լրացրեք.

**ՈՎ ԻՆՉՈՎ Ե ԾԱԾԿՎԱԾ**

Վոչխարը ծածկված է բրդով: Հավը . . . . :  
Առարը . . . : Զուկը . . . : Զին . . . : խողը . . . :

**Տեղեկագրք.**—Փետուրներով, մազով, աղվամազով,  
թեփուկներով, բրդով:

ԱՇԽԱՏԱՆՔ 97. Լրացրեք (որինակ՝ այժը պաշտպանվում է յեղջյուրներով):

**ՈՎ ԻՆՉՈՎ Ե ՊԱՇՏՊԱՆՎՈՒՄ**

Զին, շունը, կատուն, կովը, խոզը, բազեն, գալլը,  
նապաստակը Պաշտպանվում է.

ատամներով, չեղջյուրներով, կտուցով, մազիկներով,  
ամբակներով, վազքով:

ԱՇԽԱՏԱՆՔ 98. Նկարեցեք և ապա՝ վանկերի  
բաժանած արտազրեցեք:

**ԳԱՐՈՒՆ**

Թե գարուն է նաչ—նախշուն,

Նա լինչեր և մեղ բերում:  
— Ծիլ ու ծաղիկ, կանաչ խոտ,  
ալ ու ալվան վարդ շաղոտ:

ԱՇԽԱՏԱՆՔ 99. Տես աշխատանք 75:

**ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ**

Պաշտպանեցեք դորտերին և մողեսներին.  
Նրանք մեր բարեկամներն են:

ԱՇԽԱՏԱՆՔ 100. Տես աշխատանք 75:

**ԼԻՆԵՆԲ ԱՌՈՂՋ ՅԵՎ ՈՒԺԵՂ**

Մի ուտի և մի խմի շատ տաք և շատ  
սառն. դրանից փչանում են ատամներդ:

ԱՇԽԱՏԱՆՔ 101. Նկարեցեք հանելուկի լուծումը  
և ապա արտազրեցեք.

**ՀԱՆԵԼՈՒԿ**

Մի մարդ՝ մեջը լիքը ուրազ:

# ՄԱՅԻՍԻ 1-Ի ՏՈՆԸ.

ԱՇԽԱՏԱՆՔ 102. Տես աշխատանք 21:

## ՄԱՅԻՍԻ 1-Ը

Քանվորների աշխատանքի տոնն և:

## ՎՈՂՋՈՒՅՆ

Ամբողջ աշխարհի  
աշխատավորներին:

## ԿԵՑՑԵ՛

Քանվորների և գյուղացիների  
միությունը:

ԱՇԽԱՏԱՆՔ 103. Նկարեցեք և ապա արտա-  
գրեցեք.

## ՄԱՅԻՍԻ 1-Ը

Գարնան առաջին այս ուրօխ տոնին  
գուրս չելեք խուժք—խուժք, բանվոր ընկերներ,  
և վողջույն տալով դաշտ ու ձորերին՝  
յերգեք ձեր ազատ, տոնական չերգեր:

# ՊԱՐՏԵԶՈՒՄ ՅԵՎ ԱՅԳՈՒՄ

ԱՇԽԱՏԱՆՔ 104. Տես աշխատանք 29:

## ՄԱՅԻՍ

# 2

## ՅԵՐԵՒՇԱԲԹԻ

Մալխին բացվում և վարդը,  
սոխակ չերգում անուշակ:

ԱՇԽԱՏԱՆՔ 105 Նկարեցեք վարդ, թիթեռ և  
ապա արտագրեցեք.

## ՄԱՅԻՍ

Ճամպան տվեք, սնոր ու դաշտեր,  
ճամպան բացեք մեր հյուրին,  
նա բերում և ծաղիկ, թիթեռ,  
նախշուն որեր մեր յերկրին:

ԱՇԽԱՏԱՆՔ 106. Լրացրէք.

**ԲՈՒՅՍԵՐ**

Ցորենը հացահատիկ է: Շաղկամը . . . : Մա-  
նուշակը . . . : Կաղամբը . . . : Համիկը . . . :  
Վարունգը . . . : Զանգակը . . . : Համեմը . . . :  
Տանձենիքն . . . : Ամսական բողկը . . . : Վարդը . . . :  
Սամիթը . . . : Խնձորենիքն . . . :

**Տեղեկագր.**— Կանաչեղեն, ծառ, հացահատիկ,  
ծաղիկ, բանջար:

ԱՇԽԱՏԱՆՔ 107 Լրացրէք.

**ՎՈՐՏԵՂ ԻՆՉ Ե ԱՃՈՒՄ**

Ալգոմ աճում են՝  
Դաշտում աճում են՝  
Բանջարանոցում աճում են՝  
Պարտիզում աճում են՝  
Անտառում աճում են՝

**Տեղեկագր.**— Սունկ, խնձորենի, գարի, կարտո-  
ֆիլ, ցորեն, տանձենի, կեռասենի, մորի, առվույտ,  
լերեքնուկ, սալորենի, հաղարձենի, լելակ, հաճար՝  
վարսակ, զանգակ, վարդ, շուշան:

**ԹՈՂՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ**

ԱՇԽԱՏԱՆՔ 108. Այս ընտանի թռչուններն ար-  
տապրեցէք ալբուրենական կարգով.

**ԸՆՏԱՆԻ ԹՈՂՈՒՆՆԵՐ**

Հնդուհով, սագ, բագ, աղափնի, հով, աքաղաղ:

ԱՇԽԱՏԱՆՔ 109. Նկարեցէք հավը և շրջանակի  
մեջ արտագրեցէք.



ԱՇԽԱՏԱՆՔ 110. Նկարեցէք սագեր և սպա՝  
վանկերի բաժանած արտագրեցէք:

**ՍԱԳԵՐ**

Զսւ, շսւ, շատակեր,  
սև ու սպիտակ իմ սագեր,  
հերիք՝ վորջափ լողացիք,  
կարմիր վոտներդ լըվացիք.  
հերիք՝ վորջափ գետի մոտ  
վորդեր կերաք դուք տըղմոտ.  
գընանք, գընանք դեպի տուն,  
ձեզ կուտ կըտամ իրիկուն:

ԱՇԽԱՏԱՆՔ 111. Կազմակերպեցէք դասարա-  
նական փոստ—արկը: Կարճ և պարզ գրեցէք այն բո-

լորի մասին, ինչ վոր պատահում է գյուղում և դըպ-  
րոցում, կամ ինչ վոր պիտի մացնել դպրոցում, և  
թերթիկը դասարանում կախ տված փոստ — արկղը  
ձգեցեք:

Շինծու բաներ չգրեք, ընկերներից չդանդատվեք,  
վիրավորական խոսքեր թույլ չտաք:

Փոստ — արկղը բացեք շաբաթական մի անգամ և  
բարձրաձայն կարդացեք:

ԱՇԽԱՏԱՆՔ 112. Կրացրեք.

### ԹՈՂՈՒՆՆԵՐԻ ՁԱՅՆԵՐԸ

Հավերը կըչկըչում են: Ազաջևիները . . . : Կա-  
չազակները . . . : Աքազազները . . . : Ագոաջևերը .  
. . . : Սոխակները . . . : Ծաերը . . . : Սագերը . . . :

**Տեղեկաց.** — Կոսվում է, կոսվում են. կանչում է,  
կանչում են. դաշլայում է, դաշլայում են. ծըլվըլում է,  
ծըլվըլում են. ոնգում է, ոնգւմ են. դունդունում է,  
դունդունում են կըչկըչում է, կըչկըչում են

ԱՇԽԱՏԱՆՔ 113. Արտագրեցեք՝ վանկերի բա-  
ժանած:

### ԹՈՂՈՒՆԻ ՅԵՐԳԸ

Քեզ եմ գովում, ծագիկ գարուն,  
ալ ու արվան ծագիկ սիրուն,

քո սեղանը անհատնելի՛  
իմ ձագերին կեր է տալի,

ԱՇԽԱՏԱՆՔ 114. Նկարեցեք հանելուկի լուծումը  
և ապա արտագրեցեք.

### ՀԱՆԵԼՈՒԿ

Սպիտակ տակառիկ, մեջը չերկու գուշն խմելիք:

ԱՇԽԱՏԱՆՔ 115. Նկարեցեք բազ և արտագրեցեք  
միայն բազիկի պատասխանը.

### ԲԱԴԻԿ

Բագիկ, բազիկ, կարմիր թաթիկ,  
սէր ևս գնում կամաց — կամաց,  
ձագուկներից չորս կողմդ արած:  
— Յես գնում եմ ջուր գանելու,  
ձագուկներս լվանալու,  
ձագուկներս մաքուր — մաքուր,  
իսկ ծուլ տղայքն են անմաքուր:

ԱՇԽԱՏԱՆՔ 116. Այնպես գրեցեք լուրաքանչուր  
բառը, վոր մեկից ավելի ցույց տա.

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

Հալ—	հալեր
Սաղ—	. . .
Բաղ—	. . .
Աղաջլի—	. . .
Աքաղաղ—	. . .
Հնդուհալ—	. . .

ԱՇԽԱՏԱՆՔ 117. ԹՎեցեք, թե ինչ միջատներ  
ևք տեսել. բոլորը գրեցեք գրատախտակին: Արտա-  
գրեցեք այս ձևով:

Իմ սեսած միջատները	Ս.Նժանոք միջատներ
1	1
2	2

ՏԵՂԵԿԱՆՔ. Փայտջիլ, թիթևո, մեղու, մալխու-  
յան բզեզ, մրջյուն, մորեխ, մոծակ, ճանճ, սարդ, բոս,  
իշամեղու, հպուս:

ԱՇԽԱՏԱՆՔ 118. Նկարեցեք հանելուկի լուծու-  
մը և ապա արտագրեցեք.

**ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ**

1.

Մեր գլխի վերև—վտաները վերև:

2.

Մի գոմ ունեմ՝ հազար գլուխ վոջխար կտանի,  
մի կապ խոտ չի տանի:

ԱՇԽԱՏԱՆՔ 119. Այնպես գրեցեք յուրաքան-  
չյուր բառը, վոր մեկ միջատ ցույց տա.

**ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

Ճանճեր	—ճանճ
Սարդեր	— . . .
Մոծակներ	— . . .
Մեղուներ	— . . .
Բզեզներ	— . . .
Թիթևոներ	— . . .
Մրջյուններ	— . . .
Մորեխներ	— . . .
Փայտջիլներ	— . . .

ԱՇԽԱՏԱՆՔ 120. Նկարեցեք ճանճ ու մեղու և  
ապա շրջանակի մեջ արտագրեցեք.

**Ա Ո Ա Մ**  
Բոլոր բըզզացող ճանճերը մեղր չեն  
չինում.

ԱՇԽԱՏԱՆՔ 121. Տես աշխատանք 75:

**ՈԳՏԱԿԱՐ ԹՈՂՈՒՆՆԵՐ**

Ծիծեռնակը փչացնում է որական մինչև հինգ հազար միջատ:

Սարյակը կոտորում է տարեկան մեկ միլիոնից ավելի միջատ:

Բուն հարձակվում է մանավանդ դաշտամկների վրա. նա տասը կատվի գործ է կատարում:

Յերեխաներ, մի սպանեք այդ ողտակար թռչուններին.



ԱՇԽԱՏԱՆՔ 122. Տես աշխատանք 75:

Քչկեք տներից ճանձերին:



ԱՇԽԱՏԱՆՔ 123. Նկարեցեք հանելուկի լուծումը և ապա արտագրեցեք.

**Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ**

Պատիկ է, բայց ճաթիկ է:

ԱՇԽԱՏԱՆՔ 124. Տես աշխատանք 29:

**ՀՈՒՆԻՍ**

|

**ՀԻՆՔՇԱԲԹԻ**

---

Հունիսը մեզ խոտ է տալիս:



ԱՇԽԱՏԱՆՔ 125. Ինքներից վերնագիրը դրեք և ապա հարցն արտագրեցեք.

Արեն և այլում,  
խոտը չորանում,  
ցորենը հասնում,  
հասկերը լցնում:

Այս լեռք է լինում:

« Ազգային գրադարան



NL0231311

47. 989

**ԳԻՆԸ 25 ԿՈՊ.**

---